

**ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Թեստը բաղկացած է 17 առաջադրանքներից, որոնք երեք տեսակի են՝ ընտրովի պատասխանով առաջադրանքներ, կարճ պատասխանով առաջադրանքներ և ընդարձակ պատասխանով առաջադրանքներ:

Ընտրովի պատասխան են պահանջում 1-10-րդ առաջադրանքները, որոնցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

Կարճ պատասխան են պահանջում թեստի 11-15-րդ առաջադրանքները, որոնցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

Ընդարձակ պատասխան են պահանջում 16-րդ և 17-րդ առաջադրանքները, որոնք խնդիրներ են: Այդ խնդիրները լուծելիս աշակերտը պետք է ներկայացնի խնդրի լուծման ամբողջ ընթացքը: 17-րդ խնդիրը լուծելիս համառոտագրելը պարտադիր է:

Եթե 16-րդ խնդրի համար տրվում է առավելագույնը 2 միավոր (յուրաքանչյուր ճիշտ քայլի համար՝ 1 միավոր), ապա 17-րդ առաջադրանքի համար՝ 3:

Ամփոփիչ վերջնական միավորը ստացվում է թեստի առաջադրանքների պատասխաններից աշակերտի վաստակած բոլոր միավորների գումարից (առավելագույնը՝ 20 միավոր), որը համապատասխանեցվում է 10 միավորանոց համակարգին:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿԸ

Միավորը	Գնահատականը	Միավորը	Գնահատականը
1	1	11-13	6
2-3	2	14-15	7
4-5	3	16-17	8
6-7	4	18-19	9
8-10	5	20	10

ԹԵՍՏԻ ՆՄՈՒՇ

Շրջանի մեջ վերցրու 1 - 10-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանները:

- 1) Գտի՛ր այն թիվը, որի գրությունը համապատասխանում է չորս հազար երեք հարյուր յոթ թվին.
- 1) 4037
 - 2) 4307
 - 3) 4703
 - 4) 4073
- 2) Ընտրի՛ր այն թիվը, որը 360-ից փոքր է 12-ով:
- 1) 4320
 - 2) 372
 - 3) 348
 - 4) 30
- 3) Քանի՞ տասնյակ կա 768 թվի մեջ:
- 1) 6
 - 2) 76
 - 3) 7
 - 4) 68
- 4) Ընտրի՛ր այն թվանշանը, որը աստղանիշի փոխարեն տեղադրման դեպքում ստացված թվերը դասավորված կլինեն նվազման կարգով. **8*6, 856, *75**
- 1) 4
 - 2) 5
 - 3) 7
 - 4) 9
- 5) Ընտրի՛ր այն թվանշանը, որը տեղադրելով աստղանիշի փոխարեն՝ կստանաս անհավասարություն. $4 \text{ կգ } 61 \text{ գ} < 4 \text{ կգ } * \text{ 1գ}$
- 1) 4
 - 2) 5
 - 3) 6
 - 4) 7

6 Ընտրի՛ր այն պատասխանը, որն արտահայտում է **2 օր 15 ժամը** ժամերով:

- 1) 215 ժ
- 2) 39 ժ
- 3) 63 ժ
- 4) 135 ժ


7 Քառակուսու պարագիծը 132 սմ է: Գտի՛ր քառակուսու կողմի երկարությունը:

- 1) 33 սմ
- 2) 66 սմ
- 3) 264 սմ
- 4) 528 սմ


8 Նշի՛ր այն գծապատկերը, որի $\frac{3}{7}$ մասը ներկված է:



1)



2)



3)



4)

9 Ո՞ր դատողությունն է **ճշմարիտ**.


- 1) Նվազելին կատանաս, եթե հանելիից հանես տարբերությունը:
- 2) Գումարելիներից մեկը մեծացնելիս, իսկ մյուսը փոքրացնելիս միևնույն միավորով, գումարը չի փոխվում:
- 3) 0-ից տարբեր երկու հավասար թվերի քանորդը հավասար է 0-ի:
- 4) Թիվը 10-ով բազմապատկելիս բավական է այդ թվի գրության վերջից երկու 0 ավելացնել:

10 Կտրեցին 12 մ երկարությամբ մետաղալարի $\frac{1}{4}$ մասը: Քանի՞ մետր մետաղալար մնաց:

- 1) 3 մ
- 2) 6 մ
- 3) 9 մ
- 4) 48 մ

11- 15-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանը գրի՛ր յուրաքանչյուր առաջադրանքից հետո նշված տեղում:

- 11** Տրամագրի միջոցով տրված է օրվա տարբեր ժամերին օդի ջերմաստիճանը: Օգտվելով տրամագրում բերված տվյալներից՝ հաշվի՛ր, օրվա ընթացքում գրանցված ամենաբարձր և ամենացածր ջերմաստիճանների տարբերությունը:



Պատ.՝

- 12** Հաշվի՛ր ամենամեծ զույգ քառանիշ և ամենափոքր կենտ եռանիշ թվերի տարբերությունը:

Պատ.՝

- 13** Դի՛ր թվաբանական գործողության նշանները (+, -, ·, :) այնպես, որ վերականգնվի հավասարությունը:

$$94 \square 54 \square 6 = 85$$

- 14** Հաշվի՛ր $6532 - 5 \cdot (1253 : 7 + 536)$ արտահայտության արժեքը:

Պատ.՝

15 Կոսահի՛ր օրինաչափությունը և տրված թվերից հետո ավելացրո՛ւ ևս մեկ թիվ:
324, 524, 924, 1524, :

Պատ.՝

**16-17-րդ առաջադրանքներից հետո նշված տեղում մանրամասն ու հիմնա-
վորված ներկայացրո՛ւ առաջադրանքների լուծման ամբողջ ընթացքը:**

16 Ուղղանկյունաձև սավանի երկարությունը 220 սմ է, որը 60 սմ-ով մեծ է
լայնությունից: Հաշվի՛ր այդ սավանի մակերեսը:

Պատ.՝

17 Երկու վայրերից, որոնց միջև եղած հեռավորությունը 564 կմ է, միաժամանակ
իրար ընդառաջ շարժվեցին երկու ավտոմեքենա, նրանցից մեկի արագությունը
63 կմ/ժ էր: Ի՞նչ արագությամբ էր շարժվում երկրորդ ավտոմեքենան, եթե
ավտոմեքենաները հանդիպեցին շարժվելուց 4 ժամ հետո:

Պատ.՝